

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄՆԵՐԻ  
ԽՆՐԴԻ ԼՈՒՍԱՐԱՆՈՒՄԸ ԵԳԻՊՏԱԿԱՆ  
«ԱԼ-ԱՀՐԱՄ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ  
1894–1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Եգիպտոսում XIX դարավերջը հատկանշվում է հասարակական գիտակցության ընդերքում սկիզբ առած փոխակերպումների գործընթացով, ինչը երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի անմիջական արգասիքն էր: Երկիրը 1882 թ. դարձավ բրիտանական գաղութ, սակայն նրա միջազգային իրավական կարգավիճակը մինչև 1914 թ. փոփոխության չենթարկվեց: Մեծ Բրիտանիան չհայտարարեց Եգիպտոսի վերջնական բռնազավթման, կամ դրա նկատմամբ հովանավորչություն հաստատելու մասին: Այն համարվում էր Օսմանյան կայսրության մաս, իսկ Մեծ Բրիտանիան՝ «Ժամանակավորապես օկուպացնող պետություն»<sup>1</sup>:

Օրաբիի ապստամբությունից հետո<sup>2</sup> եգիպտական հասարակական մտքի հետագա զարգացումները տանում էին դեպի ազգայնական գաղափարների, սեփական երկիրն օտար տիրապետությունից ազատագրելու ձգտումների ամրապնդմանը: Այս ամենի ուղղորդման խնդրում մամուլը կարևորագույն դեր

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Луджиц В. Г., Новая история арабских стран, Москва, 1963, էջ 201–216,

سامي عزيز، الصحافة المصرية وموقفها من الاحتلال البريطاني، القاهرة 1968، ص. 157. (Սամի Ազիզ, Եգիպտոսի մամուլը և նրա դիրքորոշումը բրիտանական գաղութատիրության նկատմամբ Կահիրե, 1968, էջ 157):

<sup>2</sup> Օրաբիի ապստամբության մասին տե՛ս Cromer, Modern Egypt, London, 1908, pp. 175–193, Луджиц В. Г., նշվ. աշխ., էջ 186–196:

էր կատարում՝ լինելով գաղափարական տարբեր հոսանքների ձևավորման հիմնական խառնարան:

Եգիպտոսի ամենաերկարակյաց պարբերականներից մեկն է հռչակավոր «Ալ-Ահրամը»<sup>3</sup> (Բուրգեր), որն այսօր էլ երկրի հասարակական կյանքի անբաժան մասն է: Ի թիվս այլ պարբերականների՝ այն նույնպես պատկանում էր սիրիական տարածքներից (հատկապես Լիբանան) ներգաղթած մտավորականներին՝ ի դեմս Սալիմ և Բշարա Թակլա եղբայրների<sup>4</sup>: Պարբերականը որպես շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել Ալեքսանդրիայում՝ 1876 թ., սակայն հետագայում վերածվեց օրաթերթի և սկսեց հրատարակվել Կահիրեում<sup>5</sup> (1899 թ.):

XIX դարավերջին Եգիպտոսում հասարակական միտքն առաջնորդող պարբերականների եռանկյունին գլխավորում էր «Ալ-Ահրամը»<sup>6</sup> բրիտանամետ «Ալ-Մուքաթթամի» (Կահիրեում գտնվող բլրաշարքի անվանում) և իսլամական «Ալ-Մուալլադի» (Հաղթական) կողքին: Վերջին երկուսը նրա մրցակիցներն էին և ավելի ուշ էին հայտնվել ասպարեզում, ընդ որում, եթե «Մուքաթթամն» ու «Ալ-Ահրամը» հակառակորդներ էին, ապա «Ալ-Մուալլադը» հավասարապես նրանցից յուրաքանչյուրի թշնամին էր: «Ալ-Մուքաթթամը» ստեղծվել էր «Ալ-Ահրամին»

<sup>3</sup> Պարբերականի ամբողջական անվանումը՝ *الأهرام جريدة يومية سياسية تجارية* «Ալ-Ահրամ, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթ»:

<sup>4</sup> Sté u Hartmann Martin, *The Arabic Press of Egypt*, London, 1899, էջ. 3  
Հեղինակը հետաքրքիր համեմատություն է կատարում՝ «չափազանց ծուլ, թեթևամիտ, անտարբեր, ստրկամիտ, սակայն ոչ շնորհագուրկ» եգիպտոսցուն հակադրելով «ջանասեր, հետևողական և ուսումնաստենչ» սիրիացուն՝ միաժամանակ կարևորելով սիրիական տարրի խաղացած դերը Եգիպտոսի լրագրության զարգացման գործում:

<sup>5</sup> Պարբերականի գաղափարական ուղղվածության և հայերին վերաբերող հոդվածների մասին տե՛ս 1878 *مصر في الأهرام المصرية والتقتية الأرمنية* 9-*القامرة*, 2006, ص. 7, 1923, 7:  
(Մուհամմեդ Ռիֆաթ Ալ-Իմամ, Հայկական հարցը և եգիպտական «Ալ-Ահրամը», Կահիրե, 2006, էջ 7-9):

<sup>6</sup> Sté u *مصري عزيز*, նշվ. աշխ., էջ 159-161:

հակակշռելու նպատակով՝ բրիտանական կառավարության հանձնարարականով և ֆինանսավորմամբ: «Ալ-Մուայյադի» հիմնական նպատակը եգիպտական հասարակության իսլամական ազգայնական շերտերի գաղափարական պայքարն էր բրիտանական գաղութատիրության դեմ և արաբական-իսլամական արժեքների վերահաստատումը, ինչը մինչ այդ իրականացնում էր Փարիզում լույս տեսնող «Ալ-Ուրուա Ալ-Ուսկա» (Անքակտելի կապ) իսլամական պարբերականը<sup>7</sup>:

Մարթին Հարթմանը 1899 թ. Լոնդոնում հրատարակած իր «Եգիպտոսի արաբերեն մամուլը» ուսումնասիրության մեջ «Ալ-Ահրամը» դասում է քաղաքական-պահպանողական ուղղվածության պարբերականների շարքին, որը «լողում էր Ֆրանսիական ջրերում», ծառայում լազգայնական գաղափարներին՝ արժանանալով Բրիտանիայի հակակրանքին, և ամեն կերպ քծնում էր սուլթանին: Դրա ապացույց էր նաև այն, որ Բշարա Թակլային սուլթանը փաշայի տիտղոս էր շնորհել:

Հայերին առնչվող նյութը պարբերականի էջերում տեղ է գտել սեփական թղթակիցների, հայտնի քաղաքական գործիչների, միսիոներների նամակների, ֆրանսիական, ռուսական, գերմանական, ամերիկյան մամուլից արտատպված հոդվածների, Բ. Ղեան հաղորդած լուրերի տեսքով: Պարբերականը, հիմնականում առաջնորդվելով եվրոպական ազդեցիկ լրատվամիջոցներով, հայերին առնչվող նյութը ներկայացրել է մեծ տերությունների վարած քաղաքականության համատեքստում: Թերթի լրատվությունը հիմնականում աչքի է ընկնում օսմանյան պաշտոնական տեղեկատվությամբ չհակասելու միտումով: Այդ է վկայում հայկական կոտորածներին առնչվող հիշատակումների սակավությունը՝ ակներևաբար դրանք «չա-

---

<sup>7</sup> St'u Ahmed Jamal Muhammed, *The intellectual origins of Egyptian nationalism*, London, New York, Toronto, 1960, էջ 27-30:

փազանցված» բնորոշելու օսմանյան քարոզչությանը համա-  
քայլ:

Թեև «Հայկական հարց» խորագրի ներքո թերթը հայտա-  
րարում է, որ հայկական կոտորածներին անդրադառնում է  
«ճշմարտությանը ծառայելու և հայրենակիցների կասկածները  
փարատելու նպատակով», այնուամենայնիվ եզրահանգում է.  
«այն, որ հայկական դեպքերը չափազանցված և ուռճացված  
են ներկայացվում այդ հարցում շահագրգիռ անձանց կողմից,  
կասկած չի հարուցում: Անգլիացիները լուրս ուղտ են սարքել՝  
ցանկանալով դա այդպես ներկայացնել իշխանություններին»<sup>8</sup>:

Նույնանուն հոդվածաշարի մեկ այլ մասում անդրադարձ է  
կատարված Բոստոնում լույս տեսնող հայտնի «Քոնգրեսեյշը-  
նալիստ» պարբերականում տպագրված ամերիկացի միսիո-  
ներ Սայրուս Համլինի հոդվածին՝ հայկական իրադարձություն-  
ների ու դրանց պատճառների մասին: Հեղինակը ներկայացրել  
է իր գրույցը մի հայի հետ՝ նրան բնութագրելով որպես «շատ  
խելացի մի հայ, որը խոսում է անգլերեն և հայերեն, բացի այդ,  
հեղափոխության կոչ անող կարևոր գործիչներից մեկն է»<sup>9</sup>:  
Վերջինս հավաստիացրել է, թե իր հայրենակիցները մեծ հույս  
են կապում օտար տերություններից մեկի՝ Փոքր Ասիա մուտք  
գործելու և այնտեղ իշխանություն հաստատելու հետ: Նրա  
կարծիքով, եթե Եվրոպան հետաքրքրվեց Բուլղարիայի  
խնդրով ու ազատագրեց այն օսմանյան լծից, պետք է, որ հա-  
յերին ևս ականջալուր լինի և օգնության ձեռք մեկնի: Տեղին է  
նշել, որ «Նյու Յորք հերալդի» 1894 թ. դեկտեմբերի 20-ի հա-  
մարում լույս է տեսել Ս. Համլինի բացատրությունը վերոհիշյալ

<sup>8</sup> «Ալ-Ահրամ», 26 դեկտեմբերի 1894 թ.:

<sup>9</sup> Նույն տեղում, 22 դեկտեմբերի 1894 թ.:



հողվածի վերաբերյալ<sup>10</sup>: Հեղինակը պարզաբանում է, որ ցանկացել է միայն ընդգծել ազատագրական շարժումների աննշան լինելը, քանի որ հայերը, լինելով ազնիվ և աշխատասեր ժողովուրդ, այնուամենայնիվ, չափազանց սակավաթիվ են, որպեսզի ապստամբություն կազմակերպեն:

Հետագա համարներում պարբերականն ուշադրությունը քեռեռում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրին՝ հետադարձ հայացքով կրկին ու կրկին արծարծելով հայկական կոտորածները չափազանցված ներկայացնելու Բ. Ղազարյանի տեսակետը: Ղա էլ այդուհետ դառնում է ալահրամյան լրատվության հայկական ընդգրկման հիմնական առանցքը. «Բ. Ղառը համաձայնել է ստեղծել խառը հանձնաժողով՝ միմիայն Եվրոպային այդ չափազանցություններն ապացուցելու և ճշմարտությունը վերհանելու նպատակով, հատկապես այն բանից հետո, երբ Հայկական կոմիտեն Լոնդոնում սկսեց պահանջել իրականացնել 1878 թ. Նուբար փաշայի կողմից առաջարկված բարենորոգումները: Սակայն Արմինիայում<sup>11</sup> մուսուլմանները հայերից շատ են, և որևէ ազգի կամ վիլայեթի գերապատվություն տալը բացառված է: Մենք սպասում ենք հայկական կոտորածների և բարենորոգումների վերաբերյալ հյուպատոսների գեկույցների հրապարակմանը՝ մինչ կհայտնենք մեր անկողմնակալ տեսակետը»<sup>12</sup>: Դժվար չէ նկատել, որ հայերի կողմից Եվրոպայի միջամտության ակնկալումը և հայկական բարենորոգումները կայսրության ընդհանուր բարեփոխումների մեջ

---

<sup>10</sup> St'iu Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, էջ 322–323:

<sup>11</sup> Արևմտյան Հայաստանը թերթում հիշատակված է Արմինիա (Հայաստան) անվանմամբ, ինչից կարելի է ենթադրել, որ այն դիտվել է որպես առանձին վարչական միավոր:

<sup>12</sup> «Ալ-Ահրամ», 26 դեկտեմբերի 1895 թ.:

չքացնելու գաղափարը Բ. Ղազարյանի հին ռազմավարությունն էր, որը ջանասիրաբար կրկնում էր «Ալ-Ահրամը»:

Ուշագրավ է, որ Հայկական հարցի վերաբերյալ Հռոմի պապական աթոռի հայտնած պաշտոնական կարծիքը ևս մեկնաբանություն է գտել «Ալ-Ահրամում»: Ըստ Հռոմի պապի՝ խնդիրն անհրաժեշտ էր դիտարկել երկու տեսանկյունից՝ կրոնական և ազգային: Կրոնական գործոնը նա ժխտել էր՝ վկայակոչելով, որ «արևելքի քրիստոնյաները վայելում են ապահովություն ու անդորր, նրանք շրջապատված են նախանձելի հոգատարությամբ և դժգոհելու իրավունք չունեն»: Հետևաբար՝ Հայկական հարցը միմիայն ազգային խնդիր կարելի էր համարել. «...սակայն, եթե ազգային գերապատվության խնդիր կա՝ մյուս ազգությունների նկատմամբ առավելություններ ունենալու ակնկալիքով, ապա դա արդարացի չէ: Եթե նպատակն ընդհանուր բարեկեցություններն են, ապա կասկած չկա, որ սուլթանը կցանկանա և կծգտի իրականացնել դրանք: Իսկ դրանք անհրաժեշտ է կատարել ոչ միայն Հայաստանում, այլև կայսրության բոլոր նահիեներում, որտեղ դրանց կարիքը կա»<sup>13</sup>: Երկու դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, Վատիկանն անվերապահորեն կրկնում էր թուրքական քարոզչության ստահող պնդումները՝ ճիշտ այնպես, ինչպես «Ալ-Ահրամը»:

«Բեռլինի պայմանագիրը» խորագրի տակ զետեղված հոդվածում հեղինակը վերապահումներով է մոտենում բրիտանական մամուլում հայկական իրադարձություններին առնչվող տեղեկատվությանը՝ պատճառաբանելով, որ Մեծ Բրիտանիայում ստեղծվել են հայերի իրավունքների պաշտպանությանը նվիրված կազմակերպություններ: Հոդվածն ավարտվում է հետևյալ հարցադրմամբ. «... արդյունքներին սպասելու ընթացքում լավ կլինի խորհենք, թե ինչն է պատճառը, որ

<sup>13</sup> Նույն տեղում, 12 հունվարի 1895 թ.:

անգլիական թերթերն անտեսում են Բեռլինի պայմանագրի այն հոդվածները, որոնք պարզորոշ կերպով սահմանում են Բ. Դռանը տրված իրավունքները և շահագրգռված են միայն Օսմանյան կայսրությանը պարտավորեցնող պայմաններով՝ մշտապես Բ. Դռանը հիշեցնելով հայերի պահանջները կատարելու մասին»<sup>14</sup>: «Ընդհանուր հայացք» հոդվածում հեղինակն արդեն ժխտում է հայկական բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով. «... եթե, օսմանցի լինելով հանդերձ, չունենք արտոնություններ աշխատավարձերի և պաշտոնների հարցում, ապա հայերը բացառություն չպետք է լինեն: Մինչդեռ, նրանց են պատկանում ամենաշատ պաշտոնները: Իսկ բարեփոխումներ անհրաժեշտ է իրականացնել բոլոր այն վայրերում, որտեղ դրանց կարիքը կա, ոչ թե միայն Հայաստանում»<sup>15</sup>:

«Ալ-Ահրամի» էջերում լայնորեն լուսաբանված է Հայկական խնդրին վերաբերող ռուսական դիվանագիտությունը: Թերթը կարևորում է ռուս քաղաքագետների հետևյալ տեսակետը. «...ինչ Բրիտանիան ասում է Հայկական հարցի մասին, ուղղված է մեր դեմ՝ խոչընդոտելու մեր քայլերն Ասիայում, քանի որ նա վստահ է, որ Ռուսաստանը երբեք չի հանդուրժի Հայաստանի բաժանումը Թուրքիայից: Հայկական խնդրում մենք Օսմանյան Թուրքիայի լավագույն դաշնակիցն ենք...»<sup>16</sup>:

Ռուսական «Նովոյե Վրեմյա» թերթի հրապարակումներն են քննարկվում «Հայաստան» հոդվածում: Դրանցում մատնանշվում է, որ հայկական բարենորոգումների մասին «Ռոյթերի» հայտնած տեղեկություններն անգլիական ծգտումների երանգով են ներկված: Հոդվածագիրը եզրակացնում է, որ Ռու-

<sup>14</sup> Նույն տեղում, 26 դեկտեմբերի 1895 թ.:

<sup>15</sup> Նույն տեղում, 22 հունվարի 1895 թ.:

<sup>16</sup> Նույն տեղում, 5 փետրվարի 1895 թ.:

սաստանը դրական վերաբերմունք ունի բարենորոգումների նախագծի նկատմամբ: Այն լիովին համապատասխանում է երկրի կարիքներին, սակայն չի կարող հանգեցնել Հայաստանի անկախացմանը, քանի որ վերջինս չի համապատասխանում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի շահերին: Ռուսաստանին շահավետ է Հայաստանը տեսնել օսմանյան իշխանության տակ և խաղաղ՝ անկախ և ինքնուրույն լինելու փոխարեն, քանի որ խռովություններն ու ապստամբությունները ցանկալի չեն<sup>17</sup>:

«Հայկական հարցը և Ռուսաստանը» խորագրի տակ գետեղված է ազդեցիկ «Նովոստի» պարբերականի հրապարակումը, որտեղ վերստին մատնանշվում է ընդդեմ ազատագրական շարժումների Ռուսաստանի որդեգրած քաղաքականությունը: Ռուսաստանը Հայկական հարցը դիտարկում է որպես իրեն ու Օսմանյան կայսրությանն առնչվող մի խնդիր, քանի որ Հայաստանը բաժանված է իրենց երկուսի միջև, ուրիշ ոչ մեկն այստեղ մաս չունի և իրավասու չէ միջամտելու այդ խնդրի լուծմանը: Այսքանից հետո զարմանալի չէ «Նովոստիի» տեսակետը, թե պետք չէ մեծ ճնշում գործադրել Բ. Ռեան վրա, քանի որ դա կհանգեցնի Բրիտանիայի մտադրությունների իրագործմանը Ռուսաստանի շահերին աղերսվող հարցերում, ինչպես դա կատարվել է անցյալում:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունն «Ալ-Ահրամը» դիտարկում էր դրանք եզիպոտսում ևս կատարելու անհրաժեշտության գիտակցումից դրդված և սեփական երկրի խնդիրների մտահոգությամբ, առանձնացնելով ու մատուցելով ստեղծված իրավիճակը, որն արտացոլում էր կայսրության քաղաքական-տնտեսական ճգնաժամային կացությունը: Այն տարբեր դրսևորումներ էր

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, 29 մայիսի 1895 թ.:



ստանում՝ կախված կայսրության համապատասխան տարածքների նկատմամբ տերությունների հավակնություններից: Այս առումով բացատրելի է թերթի՝ հայկական բարենորոգումների խնդիրը Եգիպտոսի ազգային շահերին զուգադրելու և համեմատելու միտումը:

Գերմանական թերթերի անդրադարձներում Ալ-Ահրամը մասնավորապես կարևորում է Հայկական հարցի հետ խնդրի զուգադրման փորձը. «... լավ կլիներ, եթե տերությունները Եգիպտական խնդիրն էլ քննարկեն այն նույն միջազգային գազաթնաժողովում, որն Անգլիան պահանջում է գումարել՝ Հայկական հարցը կարգավորելու նպատակով»<sup>18</sup>: Իսկ մեկ այլ հոդվածում թերթը հայկական բարենորոգումների կատարումն անհավանական է համարում, քանի որ «իշխանության ներկայացուցիչներն այդ հարցում լիովին ողջամիտ են և տերությունների պահանջած բարենորոգումները չեն իրականացնի, մինչև դրանք վերջնականապես չփոփոխվեն ու ի նկատի չառնվի կայսրության մնացած մասերում բարենորոգումների իրականացման անհրաժեշտությունը»<sup>19</sup>: Այսպիսով, «Ալ-Ահրամը» հետևում էր Բեռլինի վեհաժողովից ի վեր օսմանյան պաշտոնական քարոզչությանն ու գաղափարախոսությանը՝ կայսրության ընդհանուր բարենորոգումների գերադասումը մասնակի բարենորոգումներից, ընդսմին, անգիտանալով, որ միանում էր նույն՝ մասնակի բարենորոգումների ռազմավարությանը, երբ իր մտահոգության առանցքն էր դարձնում զուտ Եգիպտական խնդիրը:

Ուշագրավ է պարբերականի «Հայաստան ու Եգիպտոս» հոդվածը, որում վերլուծվում է իռլանդացի հայտնի լրագրող և

---

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում, 8 հունիսի 1895 թ.:

գիտնական էմիլ Դիլլոնի<sup>20</sup> կանխատեսումները՝ Բրիտանիայի զավթողական նկրտումների համատեքստում Եգիպտոսում մնալու նրա մտադրությունները: Նա քննում է հայկական և եգիպտական հարցերի շահարկումը մեծ տերությունների կողմից. «Բրիտանիան առաջադրեց Հայկական հարցը՝ մյուս կողմում դնելով եգիպտականը: Այնուհետև խաղի մեջ մտավ Ռուսաստանը, որին էլ հետևեց Ֆրանսիան, որոնցից յուրաքանչյուրը հետամուտ էր իր շահերին»<sup>21</sup>: Ըստ հրապարակման՝ Հայաստանում կատարվող ավերն ու սպանող լիովին ձեռնտու էին Ռուսաստանին: Իսկ Եգիպտական հարցով ու Անգլիայի՝ այնտեղից դուրս գալու մտադրությամբ շահագրգռված էր Ֆրանսիան: Եվրոպական երկրները հավանաբար կառաջարկեին նիստ գումարել՝ Հայաստանում բարենորոգումների անցկացումը քննարկելու պատրվակով, ինչից հետո Անգլիայից կպահանջեին լքել Եգիպտոսը:

Թերթի սեփական թղթակիցը Կ. Պոլսից գրում է. «Հայկական բարենորոգումները, մեր կարծիքով, չեն իրականացվի: Դրանք կարող են կատարվել բացառապես թուրքական կողմի մշակած ծրագրի համաձայն, ըստ որի, բարենորոգումներ անհրաժեշտ է իրագործել Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում՝ առանց որևէ երկիր առանձնացնելու: Ակնհայտ է, որ Բրիտանիան Հայկական հարցին և կայսրության մնացած խնդիրներին միջամտելիս առաջնորդվում է կայսրությունից Եգիպտոսը վերջնականապես անջատելու դիտավորութ-

<sup>20</sup> Էմիլ Դիլլոնը «Положение дел в Турецкой Армении» հոդվածում ներկայացրել է արևմտահայերի կացությունը՝ շեշտադրելով տերությունների ընտրած դիրքորոշման բացասական ազդեցությունը Հայկական հարցում (տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, էջ 327–373):

<sup>21</sup> «Ալ-Ահրամ», 8 հուլիսի 1895 թ.:

յամբ»<sup>22</sup>: Այդ նույն տրամաբանությունը շարունակվում է հետագա համարներից մեկում. «... Բ. Դուռը Բրիտանիայի առաջարկած պայմաններն ընդունելու մեջ տեսնում է միջամտություն երկրի ներքին գործերին: Բարենորոգումները հարկավոր է կատարել ամբողջ երկրում, որպեսզի կանխարգելի եվրոպական միջամտությունը: Թշնամիները սպասում են հարմար առիթի և, նույնիսկ Հայկական հարցին վերջ դրվելու դեպքում, նրանք կգտնեն մեկ այլ տարածք և էլի կառաջարկեն բարենորոգումներ իրականացնել ...»<sup>23</sup>: Հեղինակը եզրակացնում է, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը որևէ միջոց չեն ձեռնարկի՝ Բ. Դռանը ստիպելու բարենորոգումներ իրագործել, քանի որ շատ լավ տեսնում են դրանց հետևում թաքնված սպառնալիքը, և վստահ են, որ Անգլիան դեռևս պատրաստ չէ նպաստելու բարենորոգումների կատարմանը՝ մինչև չհաղթահարի Եգիպտոսում իր առջև ծառացած խոչընդոտները:

Ընթերցելով «Ալ-Աիրամի» խմբագրի հոդվածը, որտեղ ներկայացված են Բրիտանիայի հավակնությունները Եգիպտոսում մնալու և Սուդանում հաստատվելու առնչությամբ, ակնհայտ է դառնում այն, որ թերթը լավ էր հասկանում բրիտանական դիվանագիտության և Հայկական հարցի՝ որպես երկուստեք զսպող հանգամանքի շահարկումն Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի կողմից. «... կարիք չկա լսել Ռ. Սուլթերիի վերջին ելույթները Հայկական հարցի մասին: Նա հակասում է ինքն իրեն, խաբում իր ազգակիցներին: Իրականում անգլիացիները՝ ազատ, թե պահպանողական, թշնամաբար են վերաբերվում Բ. Դռանը՝ վրեժ լուծելով սուլթանից, քանի որ նա հրաժարվում է ճանաչել Եգիպտոսի նվաճումն Անգլիայի կողմից: Այդ թշնամանքը նրանք բացեիքաց դրսևորեցին այն

<sup>22</sup> Նույն տեղում, 20 հուլիսի 1895 թ.:

<sup>23</sup> Նույն տեղում, 21 սեպտեմբերի 1895 թ.:

օրից, երբ տապալվեց նրանց գաղտնի համաձայնությունը<sup>24</sup>։ Եթե Անգլիան սուլթանից Սուդանը տնօրինելու համաձայնություն ստանար, ընդմիջտ կմոռանար հայերին ու Հայկական հարցը, և վերջ կտրվեր այդ խառնաշփոթին»<sup>25</sup>։

«Ալ-Ահրամի» վերաբերմունքն արևմտահայության խնդիրների և Հայկական հարցի նկատմամբ պարբերականում ստացել է որոշակի ուրվագծեր, ինչը եգիպտական հասարակական մտքի մի որոշակի շերտի մոտեցումների հանրագումարն է։ Խնդրի քննարկումն «Ալ-Ահրամն» իրականացնում է իրեն հատուկ ոճով, որն անչափ կարևոր էր ժամանակի քաղաքական իրավիճակում խուսանավելու համար և որին նա անդավաճան հետևում է ցայսօր. մատուցել մի նյութ, որն ընթերցողին խորհելու և ինքնուրույն եզրակացությունների հանգելու առիթ կընձեռի՝ միաժամանակ հաճախ հիշեցնելով նաև իր դիրքորոշումը։

Ծանոթանալով «Ալ-Ահրամի» 1894–1896 թթ. համարներին՝ կարելի է փաստել, որ նշված ժամանակահատվածում պարբերականն առավելապես ցուցաբերել է հակաբրիտանական ուղղվածություն։ Հստակ արտահայտված է պարբերականի՝ օսմանյան պաշտոնական լրատվությանը համահունչ քայլելու միտումը։ Արևմտահայության խնդիրները պարբերականի էջերում արտացոլվել են՝ անցնելով Եգիպտական խնդրի կիզակետով՝ հստակ եզրագծելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության առանցքային շահերը և Եգիպտոսն անուղղակիորեն շաղկապելով Արևմտյան Հայաստանին։

<sup>24</sup> Տե՛ս Липсонъ В. Г., նշվ. աշխ., էջ 201–202։

<sup>25</sup> «Ալ-Ահրամ», 20 փետրվարի 1896 թ.։



ОСВЕЩЕНИЕ ПРОБЛЕМЫ РЕФОРМ В ЗАПАДНОЙ  
АРМЕНИИ В ЕГИПЕТСКОЙ ГАЗЕТЕ "АЛЬ-АХРАМ" В  
1894-1896 ГОДАХ

РЕЗЮМЕ

Египетская арабоязычная газета "Аль-ахрам", представляла взгляды определенного слоя египетской общественной мысли к проблеме проведения реформ в Западной Армении, которая находилась в Османской империи. В 1894-1896 годах издание проявило преимущественно антибританское направление. Также четко выражена склонность газеты следовать османским официальным средствам информации. Вопрос осуществления реформ в Западной Армении на страницах издания отражен через призму "Египетского вопроса", определяя контуры основных интересов ведомой Великобританией политики, и этим косвенно привязывая Египет к Западной Армении.

THE ELUCIDATION OF THE PROBLEM OF REFORMS IN  
WESTERN ARMENIA IN EGYPTIAN PERIODICAL  
"AL-AHRAM" (1894-1896)

SUMMARY

The present article deals with the position of the Egyptian Arabic periodical "Al-Ahram" which represents the core views of the particular circles of the Egyptian public opinion about the problem of reforms implemented by the Ottoman Empire in Western Armenia. One may conclude that the periodical expressed an anti-British behaviour in most of the cases during a certain time interval (1894-1896), in addition the tendency that the "Al-Ahram" showed towards the Ottoman official press is brought to light. The question of reforms in Western Armenia is touched on the pages of the publication after being passed through the prism of "Egyptian Issue", thus defining the contours of the basic interests within the frames of the UK policy in the Ottoman Empire, and linking indirectly Egypt to Western Armenia.